ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«18» հունիսի 2018 թվականի № 65-Հ

ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 28-րդ հոդվածով, 29-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «ՀԱՐՄՆԻԿ» ՍՊ ընկերության ՀՀ Շիրակի մարզի Քարափի տուֆերի և բազալտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման մասին (ՇԱԹ-29/444) 2018թ-ի ապրիլի 13-ի N 01/20 գրությունը, «ԷԶՈՊ» ՍՊ ընկերությանը 2018թ-ի մայիսի 22-ի թիվ 13 դիմումը՝ հրապարակային սակարկություններին մասնակցելու մասին, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 2018թ. մայիսի 29-ի համաձայնությունը, 2018 մայիսի 31-ին կայացած աճուրդի արձանագրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ընդունել ի գիտություն, որ «ՀԱՐՄՆԻԿ» ՍՊ ընկերությանը պատկանող ընդերքօգտագործման /ՇԱԹ-29/444, Պ-444, Լ-444/ իրավունքը հրապարակային սակարկության միջոցով օտարվել է «ԷԶՈՊ» ՍՊ ընկերությանը:

2. Հաշվի առնելով սույն հրամանի 1-ին կետը, դադարեցնել «ՀԱՐՄՆԻԿ» ՍՊ ընկերության «ՀՀ Շիրակի մարզի Քարափի տուֆերի և բազալտի հանքավայրի նկատմամբ ունեցած ընդերքօգտագործման իրավունքը»:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) «ՀՀ Շիրակի մարզի Քարափի տուֆերի և բազալտի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը /ՇԱԹ-29/444, Պ-444, Լ-444/ տրամադրել «ԷԶՈՊ» ՍՊ ընկերությանը՝ կատարելով համապատասխան փոփոխություններ նշված ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում,

2) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում,

օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

3) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների

կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ